**Մրցույթ՝ Երևանի «Տ. Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (28 դասաժամ, որից 12 դասաժամը՝ ռուսական դասարաններում) ուսուցչի թափուր տեղի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք  է ներկայացնել՝
- դիմում ( Ձև 1) , մեկ լուսանկար 3x4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ( դիպլոմ ) ,
-անձը հաստատող փաստաթուղթ,
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից  և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն ( Ձև 5)
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ
-հրապարակված հոդվածների ցանկ կամ  գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր ( առկայության դեպքում)
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը  փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 9-ից մինչև նոյեմբերի 22-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա  **2022 թ. նոյեմբերի 25-ին՝ ժամը 15:00-ին**, Երևանի Տ. Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոցում, հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 5/2:
Տեղեկությունների համար զանգահարել 010 535641 հեռախոսահամարով: